ԳԼՈՒԽ 7

ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

§1 ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Գնահատում, արժեք

1. Համեմատեք երկու ձեռնարկությունների աշխատավաչձերի ընրանքները, դրանց ծավալը, լայնքը, միջին թվաբանականները, մոդերը և մեդիանները: Ո՞ր ձեռնարկության աշխատավարձի քաղաքականությունն եք համարում ավելի արդարացի:
2. Հիմնավորեք պրոցենտիլի կիրառական նշանակությունը:
3. (**Հետազոտական, խմբային, ՏՀՏ**): Ուսումնասիրեք տարվա ամիսներին ջերմաստիճանների վիճակագրական տվյալների ընտրանքները: Պարզեք.

   ա. յուրաքանչյուր ամսվա ջերմաստիճանների ընտրանքների լայնքը, մեդիանը, մոդը,

   բ. ո՞ր ամիսն է ավելի «անկայուն», այսինք՝ գրանցում է ջերմաստիճանի ամենամեծ տատանում կամ ջերմաստիճանների ընտրանքի քմենամեծ լայնքը,

   գ. ո՞ր ամսվա մոդն է ամենաբարձրը և ո՞ր ամսվանը՝ամենացածրը,

   դ. ինչքա՞ն է ամենաբարձր և ինչքա՞ն է ամենացածր մեդիանը,

   ե. ո՞րն է ամենատաք ամիսը և ո՞րն է ամենասառը ամիսը: